



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

17/01/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:  
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝  
Լուսինե Մարտիրոսյան  
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը  
Նիստը արձանագրում էր ֆին. բաժնի պետ՝ Աշոտ Հարությունյանը

Լսեցին

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի  
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի  
արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի արտահերթ նիստի  
օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի  
ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի  
համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը,  
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի  
տարածքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը  
սահմանելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային  
կազմակերպությունները վերանվանելու, հասցեները սահմանելու և նոր  
խմբագրությամբ կանոնադրությունները հաստատելու մասին:

